

Տիգրան Ռ. Եփրեմյան

ՆԱԳՈՒԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԸ ԵՎ ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ*

Ընդդեմ մեծ տերությունների եվրոպական համերաշխության*

«Եթե եվրոպան բաղկացած լիներ ազատորեն ձևավորված և ներքնապես ազատ ազգերից, խաղաղությունը պետությունների միջև կհեշտանար և եվրոպայի Միացյալ Նահանգների ստեղծումը հնարավոր կդառնար... Ես ցանկանում էի հիմնել եվրոպական համակարգ, եվրոպական օրենսգիրք, եվրոպական արդարադատություն, և կլիներ մեկ եվրոպական ժողովուրդ»¹:

Նապոլեոն Բոնապարտ

Բանալի բառեր – Նապոլեոն Բոնապարտ, եվրոպական համակարգ, ազգ, ինքնորոշում, ինքնիշխանություն, ազատություն, հավասարություն, հայեր, Վիեննայի կոնգրես, լեգիտիմություն, հավասարակշռություն:

Մուտք

Երեսնամյա պատերազմի արդյունքում Վեստֆալյան պայմանագրերով ձևավորված արդի աշխարհակարգը մի քանի կերպափոխություններ է ապրել, որոնցից յուրաքանչյուրը խոշոր ռազմական կամ սոցիալական ցնցումների հետևանք էր:

Երեսնամյա պատերազմից հետո այդպիսի խոշոր ցնցումներ դարձան Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և Նապոլեոնյան պատերազմները, որոնք «եվրոպական հավասարակշռության» հղացքով կազմակերպված հին կարգերի (ancien régime) և ֆրանսիական մոդելի «եվրոպական համակարգի» միջև բախման արդյունք էին²:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.10.2015:

1 **McLynn Frank**, Napoleon: A Biography. London, Sydney and Auckland: Pimlico, 1998, p. 664.

2 Տե՛ս **Ленин Тьерри**, Наполеон // пер. с фр. Е. Калантаровой; АСТ: Астрель, Москва 2008, էջ 97. Ըստ բրիտանացիների՝ եվրոպական հավասարակշռության հղացքը հետևյալն էր. եվրոպան բաղկացած է միջին կարգի տերություններից, որոնք հավասարակշռելով չեզոքացնում են միմյանց՝ Մեծ Բրիտանիայի համար ստեղծելով ազատ արտանվրոպական էքսպանսիայի հնարավորություն:

Հեղափոխական Ֆրանսիան պատերազմներ էր վարում նախ պաշտպանելու, ապա տարածելու համար հանրապետական արժեքները ողջ Եվրոպայում: Հանրապետական Ֆրանսիայի բանակները կերպափոխում էին Եվրոպան համաձայն ազատության (Liberté), հավասարության (Égalité) և եղբայրության (Fraternité) համընդհանրական արժեքների: Իսկ Նապոլեոնյան բարեփոխումները խթանեցին եվրոպական պետությունների և հասարակությունների արդիականացման գործընթացը: Նապոլեոն Բոնապարտի՝ Ֆրանսիական հեղափոխության արտահանման քաղաքականության (exporting the French Revolution)³ նպատակը Ֆրանսիայի ուղղորդմամբ եվրոպական ազգերի համագործակցության (European commonwealth) ստեղծումն էր⁴:

Հեղափոխական Ֆրանսիան մարտահրավեր էր հին կարգերի հաստատություններին, որին ի պատասխան կազմվեցին յոթ խոշոր հակահեղափոխական դաշինքներ (1792–1815 թթ.)՝ կասեցնելու համար Եվրոպայի ընդհանուր կերպափոխությունը⁵: Սա հանգեցրեց ընդհանուր եվրոպական հակամարտության: 1799 թ. բրյուսելին (նոյեմբեր) հեղափոխության հերոսներից գեներալ Նապոլեոն Բոնապարտը կատարեց պետական հեղաշրջում (coup d'état) և հռչակեց հեղափոխության ավարտը՝ ձևավորելով ավտորիտար կառավարություն և պահպանելով ժողովրդավարական արարողակարգերը⁶: Անհրաժեշտ էր իրավական ձևակերպում տալ հեղափոխությանը հաստատված համակեցությանին նոր իրողություններին:

Սույն աշխատանքում քննարկվում են Նապոլեոնի եվրոպական քաղաքականությամբ միջազգային հարաբերություններում առաջ եկած նոր հարացույցի ձևավորման հիմնական միտումները, որոնք կասեցվեցին Վիեննայի վեհաժողովում ընդունված կարգավորումներով: Այս ժամանակահատվածում էր, որ առաջին անգամ աշխարհիկ արժեքների հիման վրա ներկայացավ եվրոպական ազգերի ընտանիքի գաղափարը, որը, սակայն, Վիեննայում փոխարինվեց եվրոպական մեծ տերությունների համերաշխության հղացքով:

1. Ֆրանսիական հեղափոխության արտահանումը

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին ցամաքային պատերազմի մեծ գիտակ Նապոլեոն Բոնապարտը (1769–1821 թթ.) իր «համակարգը» ներդրեց Եվրոպայի մեծ մասում⁷: Նապոլեոնը ոտնահարում էր միապետների ինքնիշխանությունը, սակայն հարգում՝ ազգերի իրավունքները, ինչը գործնականում դրսևորվում էր կառուցվածքային և հաստատութենական

Ֆրանսիայում եվրոպական համակարգ ասելով՝ նկատի ունեին մեկ կամ երկու մեծ տերությունների շուրջ համախմբված եվրոպական պետությունների համակարգը:

3 Տե՛ս **Conner Susan P.**, The Age of Napoleon. Westport, London: Greenwood Press, 2004, էջ 21.

4 Տե՛ս **Kissinger Henry A.**, Diplomacy. New York, London, Toronto, Sydney, Tokyo, Singapore: Simon & Schuster, 1994, էջ 74.

5 Տե՛ս **Esdaile Charles J.**, The French Wars, 1792–1815. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2005, էջ 84–92.

6 Տե՛ս **Hause Steven and Maltby, William.** Western Civilization: A History of European Society, 2nd edition. Thomson Wadsworth, 2004, էջ 408.

7 Տե՛ս **Ленин Тьерри**, նշվ. աշխ., էջ 108–109:

բարեփոխումների տեսքով⁸: Ըստ այդմ Նապոլեոնյան ժամանակաշրջանը եվրոպայում կարևորագույն նշանակություն ունեցավ ազգերի ինքնորոշման իրավունքի սաղմնավորման տեսանկյունից: Եթե ոչ գործողության մեջ, ապա գոնե գաղափարաբանական մակարդակում պաշտպանելով ազգային ինքնիշխանության գաղափարը՝ ֆրանսիացիների կայսրը ներկայանում էր իբրև ազգերի իրավունքների պաշտպան:

Նապոլեոն Բոնապարտի այս աշխարհայացքային մոտեցումները գործնականում դրսևորվեցին սկսած իտալական արշավանքից (1796-1797 թթ.): 1796 թ. մայիսի 15-ին Միլանում Բոնապարտը, դիմելով ժողովրդին, հայտարարեց. «Ֆրանսիական հանրապետությունը կգործադրի բոլոր ջանքերը, որպեսզի ձեզ երջանկացնի և վերացնի դրա ձանապարհին եղած բոլոր խոչընդոտները: Միայն ծառայություններն են տարբերելու մարդկանց, որոնք համախմբված կլինեն եղբայրական հավասարության ու ազատության միասնական ոգով»⁹: Նա կարծում էր, որ անհրաժեշտ է ստեղծել Ֆրանսիային բարեկամ և նրա հետ կապված հանրապետությունների համակարգ: Այս համատեքստում հետաքրքիր է ֆրանսիական բանակի հրամանատարի սեպտեմբերի 26-ի կոչը իտալացիներին. «Եկել է ժամանակը, երբ Իտալիան պատվով կկանգնի հզոր ազգերի կողքին... Ազատ Իտալիան բազմամարդ է և հարուստ: Ստիպեցեք դողալու ձեր և ձեր ազատության թշնամիներին»¹⁰:

Լինելով նաև հմուտ քաղաքական գործիչ՝ գեներալ Բոնապարտը նվաճված իտալական տարածքներում ստեղծեց Լիգուրիական հանրապետությունը (Ջենովա, 1797 թ. հունիս), Տրանսպադանյան և Ցիսպադանյան հանրապետությունները (1796 թ. հոկտեմբեր), որոնք 1797 թ. հունիսին միավորվեցին՝ ձևավորելով Ցիզալպինյան հանրապետությունը Միլան մայրաքաղաքով: Այս հանրապետությունները ձևակերպվեցին նույն ֆրանսիական մոդելով. նույն սահմանադրությունը, դիրեկտորիան, երկու օրենսդիր խորհուրդները, տեղական ինքնավարության միևնույն համակարգը և այլն: 1797 թ. հոկտեմբերին Կամպո-Ֆորմիոյի պայմանագրով վերջին Սրբազան հռոմեական կայսր Ֆրանց 2-րդը (1792-1806 թթ.) ձանաչեց Ֆրանսիական հանրապետության ծավալապաշտության արդյունքները և նրա քույր հանրապետություններին¹¹: Հատկանշական է՝ երբ Կամպո-Ֆորմիոյի բանակցությունների ժամանակ ավստրիական կողմն իբրև զիջում առաջարկեց ձանաչել Ֆրանսիական հանրապետությունը, Բոնապարտը բացականչեց. «Արևը ձանաչման կարիք չունի» (“Le soleil n’a pas besoin d’être reconnu.”)¹²: Այսպես նշանավորվեց ազգերի ինքնորոշման և ազգային ինքնիշխանության գաղափարների մուտքը միջազգային հարաբերություններ:

1801 թ. փետրվարի 9-ի Լունեվիլի պայմանագրով Ավստրիան ձանաչեց նաև Ցիզալպինյան, Լիգուրիական, Բատավիական (Բելգիա) և Հելվետա-

8 Տե՛ս Grab Alexander, Napoleon and the Transformation of Europe. New York: Palgrave Macmillan, 2003, էջ 1-2, 19-33.

9 Մանֆրեդ Ա. Զ., Նապոլեոն Բոնապարտ, Եր., Հայաստան հրատ., 1975, էջ 167:

10 Նույն տեղում:

11 Տե՛ս Hause Steven and Maltby William, նշվ. աշխ., էջ 408:

12 Nothomb Jean-Baptiste, Traité de paix entre la Belgique et la Hollande du 23 janvier 1839: discours prononcé dans la séance de la chambre des représentans du 4 mars. Bruxelles: Chez Deltombe Imprimeur, 1839, p. 44.

կան հանրապետությունները¹³: Ֆրանսիայի դիրքերը ամրապնդելու համար ստեղծվեց իտալական բանակ, հիմք նախապատրաստվեց Իտալական հանրապետության հռչակման համար¹⁴: Բոնապարտը Ցիզալպինյան հանրապետության մեջ տեսնում էր ապագա միացյալ Իտալիայի հիմքը: Հետագայում՝ 1802 թ. հունվարին, Ցիզալպինյան հանրապետությունը անվանափոխվեց Իտալական հանրապետության, և Ֆրանսիական հանրապետության առաջին կոնսուլ Ն. Բոնապարտը ընտրվեց Իտալական հանրապետության նախագահ: Թեև Փարիզից գններալին տրված դիրեկտորիայի հրահանգները պարտավորեցնում էին այդ տարածքները պահել Ֆրանսիայից ուղղակի կախվածության մեջ, այդուամենայնիվ, Բոնապարտը նպաստում էր իտալական ինքնիշխան հանրապետությունների ստեղծմանը, որոնք Ֆրանսիայի հետ կապված պետք է լինեին շահերի ընդհանրությամբ¹⁵:

Հատկանշական է, որ երբ պապական զորքերի հետ բախումներից հետո Փարիզից դիրեկտորիան պահանջեց գահընկեց անել Հռոմի պապ Պիոս 6-րդին և վերացնել Պապական պետությունը, Բոնապարտը՝ իբրև «բարեպաշտ կաթոլիկ», չենթարկվեց¹⁶: Իսկ արդեն 1798-1799 թթ. նվաճելով Եգիպտոսը՝ Բոնապարտը ներկայանում էր իբրև «Ալլահին սիրելի»¹⁷:

2. Ֆրանսիական հեղափոխության արձագանքներն Օսմանյան կայսրությունում

Ֆրանսիական հեղափոխությունն արևմտյան քրիստոնեական աշխարհի առաջին ահեղ գաղափարական շարժն էր, որն իր ազդեցությունը թողեց նաև իսլամի աշխարհի վրա: Բյուզանդական քաղաքակրթության կործանումից հետո էականորեն նվազել էր նաև արևելյան քրիստոնեական աշխարհի ազդեցությունը: Արևմտյան քաղաքակրթության տեխնոլոգիական առաջընթացն ու Ֆրանսիական հեղափոխության գաղափարները մի կողմից և իսլամական քաղաքակրթության բյուրեղացումը մյուս կողմից՝ ուժերի նոր հարաբերակցություն էին ստեղծել հատկապես Օսմանյան կայսրությունում արևմտյան քաղաքակրթական ազդեցության ուժեղացման առումով: Ֆրանսիական հեղափոխության գաղափարների հաջողությունը Օսմանյան կայսրությունում մեծապես պայմանավորված էր դրանց աշխարհիկ (secular) և համամարդկային բնույթով: Քանզի Ֆրանսիական հեղափոխությունը առաջին ահեղ սոցիալական ցնցումն էր Եվրոպայում, որն ուներ ոչ կրոնական տրամաբանություն: Ընդհակառակը, դա խզում էր քրիստոնեության և պետության միջև՝ ստեղծելով ազգային ինքնության և հավատարմության նոր հարացույց: Ըստ Բեռնարդ Լյուիսի՝ այդ հարացույցը

13 Տե՛ս **Grab Alexander**, նշվ. աշխ., էջ 8:

14 Տե՛ս **Schneid Frederick C.**, Napoleon's Conquest of Europe: the War of the Third Coalition. Westport and London: Praeger Publishers, 2005, էջ 68-69.

15 Տե՛ս **Մանֆրեդ Ա. Ջ.**, նշվ. աշխ., էջ 416:

16 Տե՛ս **Grab Alexander**, նշվ. աշխ., էջ 6: Միայն հետագայում՝ 1798 թ. փետրվարին, հակաֆրանսիական հուզումներ հրահրելու մեղադրանքը պատրվակ դարձնելով՝ Դիրեկտորիայի հրամանով գններալ Լուի Բերտինն մտավ Հռոմ և հռչակեց Հռոմեական հանրապետությունը, իսկ Պիոս 6-րդը արտաքսվեց:

17 **Ленин Тьерри**, նշվ. աշխ., էջ 40-48:

Ինչևէ, Ֆրանսիական հեղափոխության գաղափարների ազդեցությունը կայսրության քրիստոնյա հատվածի վրա բավական չէր սոցիալական ցնցման համար, քանզի եկեղեցական իշխանությունը և ունեւոր ընտրախավը պահպանողական դիրք էին գրավել: Այնուամենայնիվ, Ֆրանսիական գաղափարները իրենց ազդեցությունը թողեցին հատկապես այն դեպքերում, երբ ֆրանսիացիները սկսեցին ուղղակիորեն անդրադառնալ հունական կամ այլ ազգային ձգտումներին: Օրինակ՝ հայ հայտնի թարգմանիչ, դիվանագետ և պատմագետ Մուրաջա դ'Օսսոնը (Mouradjea d'Ohsson (Մուրատ-ճայան), 1740–1807 թթ.)²² որոշակի ազդեցություն ուներ Ֆրանսիական հանրապետության նկատմամբ օսմանյան քաղաքականության վրա²³, ինչը հետագայում կենսական նշանակություն ունեցավ բալկանյան ժողովուրդների շրջանում հեղափոխության գաղափարների ներթափանցման և ազգային-ազատագրական շարժումների սկզբնավորման տեսանկյունից²⁴:

Այդուհանդերձ, Ֆրանսիական հեղափոխության գաղափարների արտահանման հիմնական աշխատանքը տարվում էր հանրապետության պաշտոնական խողովակներով, մասնավորապես Կ. Պոլսում ֆրանսիական դեսպանատան միջոցով: Երբ 1793 թ. Ֆրանսիական հանրապետության պատվիրակ Մարկիզ դե Սեն-Կռուան ժամանեց Ստամբուլ, նա ուներ երկու հիմնական առաքելություն՝ հասնել օսմանյան աջակցությանը Ֆրանսիայի արտաքին քաղաքականության համար և բարյացակամություն շահել Ֆրանսիական հեղափոխության հանդեպ: Ըստ այդմ, նույն թվականի հուլիսի 14-ին հանրապետության օրվա կապակցությամբ Կ. Պոլսում տոնակատարություն կազմակերպվեց, ուր գերիշխում էին ֆրանսիական և ամերիկյան հանրապետությունների ու Օսմանյան կայսրության խորհրդանշական գույները՝ «ի նշան իրենց միության ընդդեմ բռնապետների լիզայի»²⁵: Այս միջոցառումների իրականացման կարևոր աջակից էր հայազգի դիվանագետ և պատմագետ, Արևելքի և Օսմանյան կայսրության պատմության մասին ժամանակի ամենաարժեքավոր աշխատությունների (*Tableau Historique de l'Orient. 2 volumes; Tableau Général de l'Empire Othoman. 7 volumes*. Firmin Didot, Paris 1788–1824) հեղինակ Մուրաջա դ'Օսսոնը, ով 1792 թ. Շվեդիայի գործերի հավատարմատար (Chargé d'affaires), իսկ արդեն 1795 թ. դեսպան էր Կ. Պոլսում: Հատկապես հարկ է առանձնացնել դ'Օսսոնի «Օսմանյան կայսրության ընդհանուր պատկերը»²⁶ պատմական հետազոտությունը Օսմանյան կայսրության ու նրա հպատակների կյանքի տարբեր կողմերի մասին²⁷: Թալեյրանի խոսքերով՝ նրա աշխատությունները «նոր

22 Տե՛ս **Findley Carter V.**, A Quixotic Author and His Great Taxonomy: Mouradjea D'Ohsson and His Tableau General De L'empire Othoman, 19th International Congress of Historical Sciences 6–13 August 2000, University of Oslo, էջ 6. URL: <http://www.oslo2000.uio.no/program/papers/mlb/mlb-findley.pdf> (20.02.2015).

23 Տե՛ս **Jamgocyán Onnik**, La Révolution française vue et vécue de Constantinople (1789–1795), “Annales historiques de la Révolution française”, N 282, 1990, էջ 463.

24 Տե՛ս **Lewis Bernard**, նշվ. աշխ., էջ 113:

25 **Lewis Bernard**, նշվ. աշխ., էջ 114:

26 Տե՛ս **Բալսչինյան Ա. Հ.**, Հայությունը սկանդինավյան երկրներում: Հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը), Եր., Պատմ. ինստ., 2010, էջ 58–63:

27 Տե՛ս **Զուլայան Մ. Կ.**, Հայ ժողովրդի XIII—XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների (պատ. խմբ. **Վ. Ա. Բայբորդյան**), ՀՀ ԳԱ. Պատմ. ինստ., գիրք Ա, Եր., ՀՀ ԳԱ հրատ., 1990, էջ 62–63:

լույս սփռեցին թուրքերի իշխանության և բարքերի վրա»²⁸:

Դեռևս 1792 թվականից Մուրաջա դ'Օստոնը սերտ հարաբերությունների մեջ էր Կ. Պոլսում գործող Ֆակոբիյան շրջանականների հետ և ջանում էր, որ Բարձր Դուռը ճանաչի Ֆրանսիական հանրապետությունը: Կ. Պոլսում հայ թարգման Բետտոսի ղեկավարությամբ ակտիվ գործում էր ֆրանսիական տպագիր մամուլը, որը փորձում էր Օսմանյան կայսրության ժողովուրդներին ներկայացնել հանրապետականության և ազատության առավելությունները²⁹:

Հատկանշական է, որ լուսավորականության գաղափարներով տոգորված դ'Օստոնը ավելի ակտիվորեն էր պաշտպանում հանրապետական Ֆրանսիայի և հեղափոխության շահերը, քան Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան գեներալ Բայեն³⁰ (General Aubert du Bayet): Նա դ'Օստոնին անվանում էր «լավ ֆրանսիացի» (bon français): Իսկ արդեն 1798 թ. Մուրաջա դ'Օստոնը փորձում էր Բարձր Դուռը համոզել Բոնապարտի եգիպտական արշավանքի անվտանգ լինելը: Այդուհանդերձ, 1799 թ. Ֆրանսիայի հետ փաստացի պատերազմի պայմաններում Բարձր Դուռը դիմեց Շվեդիայի կառավարությանը՝ նրան հեռացնելու պահանջով: Վերջինս նույնպես գտնում էր, որ Շվեդիայի դեսպանի առաջնային պարտականությունը «լավ ֆրանսիացի» լինելը չէ: Բրիտանիայի և Ռուսաստանի դեսպանները պաշտպանեցին այս պահանջը³¹: Շուտով Նապոլեոնի հաղթանակները Եվրոպայում և ֆրանսիական դիվանագիտության ջանքերը Կոստանդնուպոլսում նպաստեցին, որ 1805 թ. օսմանյան սուլթանը ճանաչի Նապոլեոնին իբրև կայսր: Իսկ արդեն 1806 թ. Պոլսում Նապոլեոնի դեսպան գեներալ Սեբաստիանին կարողացավ Բարձր Դուռը պատերազմի մեջ ներքաշել և Ռուսաստանի, և Բրիտանիայի դեմ³²:

Աստիճանաբար Ֆրանսիան ևս վերանայեց իր դիվանագիտության կադրային քաղաքականությունը՝ Օսմանյան կայսրության համար տեղական քրիստոնյաների փոխարեն պատրաստելով ֆրանսիացի դիվանագետներ: Այս կերպ փոխվեց դեռևս 1721 թվականից Փարիզի Լուի լե Գրան քոլեջում գործող կարգը, որով մշտապես հայ երիտասարդներին տրվող տասներկու կրթաթոշակները այդուհետ սկսեցին տրվել ֆրանսիացիներին³³:

Ֆրանսիական հեղափոխության գաղափարների՝ դեպի Օսմանյան կայսրություն ներթափանցման նոր հնարավորություն բացվեց 1797 թ. Կամպո-Ֆորմիոյի պայմանագրից հետո, երբ Ֆրանսիական հանրապետությանը միացվեցին տարածքներ Բալկանյան թերակղզում՝ Օսմանյան կայսրության անմիջական հարևանությամբ: Շուտով այս տարածքները «Իլլիրիական պրովինցիաներ» անվամբ Ֆրանսիացիների կայսրության վարչատարածքային միավոր դարձան: Այս կերպ ֆրանսիական հետախուզությունը հույների և բալկանյան մյուս ժողովուրդների շրջանում տարածում էր ազատության, հավասարության և ազգային ինքնիշխանության գաղա-

28 Findley Carter V., նշվ. աշխ., էջ 20–27:

29 Տե՛ս Lewis Bernard, նշվ. աշխ., էջ 116:

30 Տե՛ս Findley Carter V., նշվ. աշխ., էջ 24–27:

31 Տե՛ս Findley Carter V., նշվ. աշխ., էջ 26:

32 Տե՛ս Lewis Bernard, նշվ. աշխ., էջ 124:

33 Տե՛ս նույն տեղում, էջ 115:

փարները³⁴:

Արևմտյան Եվրոպայում Ֆրանսիական հեղափոխությամբ թափ առած և եվրոպական մայրցամաքի տարբեր հատվածներում, նաև Օսմանյան կայսրությունում իր համապատասխան արձագանքները ստացած ազգաշինության գործընթացները այլևս անկասելի էին³⁵: Եվ թանգիմաթի 1839 թ. բարենորոգումների ծրագիրն ու օսմանիզմի գաղափարաբանությունը այլևս անգոր էին կասեցնելու ազգաշինության գործընթացները էթնիկ, մշակութային և քաղաքակրթական տարբեր միջավայրեր ընդգրկող Օսմանյան կայսրությունում:

3. Նապոլեոնյան համակարգի էությունը

1800 թ. օգոստոսին Պետական խորհրդում արդեն Հանրապետության առաջին կոնսուլ Ն. Բոնապարտը հռչակեց իր քաղաքականության էությունը. «Իմ քաղաքականությունն այսպիսին է. ես ղեկավարում եմ մարդկանց այնպես, ինչպես դա ուզում է մեծամասնությունը: Կարծում եմ՝ հենց դրանում է ժողովրդի բարձրագույն իշխանության ճանաչումը: Որպես կաթոլիկ՝ ես ավարտում եմ պատերազմը Վանդեայում, որպես մուսուլման՝ ես հաստատվում եմ Եգիպտոսում, որպես ուլտրամոնտան՝ ես նվաճեցի ուղեղները Իտալիայում: Եթե ես կառավարեի հրեա ժողովրդին, կվերականգնեի Սողոմոնի տաճարը»³⁶: Այս համատեքստում հարկ է նշել, որ Նապոլեոնի քաղաքականությունը Ֆրանսիայի, Նիդերլանդների, Արևմտյան Գերմանիայի և Իտալիայի հրեաներին շնորհեց քաղաքացիական իրավունքներ՝ ապահովելով հավասարություն օրենքի առաջ և հնարավորություն՝ իբրև ազատ մարդ մասնակցելու հանրային ու քաղաքական կյանքին³⁷:

Հատկանշական է Ն. Բոնապարտի փոխգիջումային քաղաքականությունը Շվեյցարիայում: 1803 թ. փետրվարին «Միջնորդության ակտով» (Acte de médiation) վերացվեց Հելվետական հանրապետությունը իր ունիտար կառուցվածքով, և վերականգնվեց համադաշնային համակարգը իր կանտոնային ինքնավարությամբ: Ճանաչվում էր 19 իրավահավասար կանտոնների գոյությունը: Բոնապարտն իբրև «միջնորդ» պահպանում էր Համադաշնության գործերով զբաղվելու իրավունքը: Հետագայում (1809 թ.) Նապոլեոնը ստացավ «Շվեյցարական համադաշնության միջնորդ» («Médiateur de la Confédération Suisse») տիտղոսը³⁸:

Նապոլեոնյան կառավարման համակարգում ազգային ինքնիշխանության ամենավաղ դրսևորումը հանրաքվեներն էին: Որոշ իրավական ակտեր, ինչպես և սահմանադրությունը ինքնին ենթակա էին հանրաքվեով հաստատման: Ըստ այդմ 1800 թ. փետրվարին հանրաքվեով հաստատվեց 1799 թ. սահմանադրությունը³⁹: Երբ 1802 թ. օգոստոսի 2-ին Բոնապարտն

34 Տե՛ս նույն տեղում, էջ 120:

35 Տե՛ս **Mardin Serif**, նշվ. աշխ., էջ 25–29:

36 **Ленин Тьерри**, նշվ. աշխ., էջ 69:

37 Տե՛ս **Schwarzfuchs Simon**, Napoleon, the Jews and the Sanhedrin. London, Boston and Henley: Routledge & Kegan Paul, 1979, էջ 1–44, 179–194.

38 Տե՛ս **Grab Alexander**, նշվ. աշխ., էջ 117–120:

39 Տե՛ս **Hause Steven and Maltby William**, նշվ. աշխ., էջ 409:

ընտրվեց ցմահ առաջին կոնսուլ, իրեն հաճախակի տրվող հարցին, թե ով է լինելու իր ժառանգորդը, պատասխանում էր. «Իմ բնական ժառանգորդը ֆրանսիացի ժողովուրդն է»⁴⁰: Այդուհանդերձ, 1804 թ. գարնանը առաջին կոնսուլը ասեկոսեներ տարածեց, թե ինքը կհամաձայնի թագ ընդունել, եթե իրեն այն առաջարկեն: Այդ թագը չէր կարող լինել թագավորական, որովհետև տասնմեկ տարի առաջ օրենք էր հրապարակվել, որ Լյուդովիկոս 16-րդը Ֆրանսիայի «վերջին թագավորն է»: Այսու՝ անհրաժեշտ էր հիմնել «կայսրություն»: Այստեղ «կայսրություն» եզրը նշանակում էր տարածք, որի վրա իշխում էին ֆրանսիացիները: Հետևաբար Նապոլեոնը ղեկավարելու էր «ֆրանսիացիների կայսրությունը»⁴¹:

1804 թ. մայիսի 18-ին, սահմանադրության համաձայն, Սենատի որոշմամբ (XII տարվա ֆլորեալի 28-ի *senatus consultum*-ով) «Հանրապետության կառավարությունը վստահվում է կայսերը, որը կընդունի ֆրանսիացիների կայսր տիտղոսը»⁴²: 1804 թ. հուլիսին կայացած հանրաքվեն ձայների բացարձակ մեծամասնությամբ հաստատեց Սենատի որոշումը⁴³: Ազգը Ֆրանսիական հանրապետությունը ղեկավարելու համար ընտրեց իր ներկայացուցչին՝ ի դեմս կայսեր: 1802 և 1804 թվաանների հանրաքվեների միջոցով Նապոլեոնը ցույց էր տալիս, որ ինքնիշխանության ակունքը ազգն է⁴⁴:

Թեպետ կայսրության գոյության համար իրավաբանորեն բավական էր Սենատի կողմից հռչակումը և հանրաքվեով հաստատումը, միջազգային հարթակում այս երևույթին լեգիտիմություն հաղորդելու համար Նապոլեոնը որոշեց թագադրման արարողակարգ անցկացնել Փարիզի Սուրբ Աստվածամոր տաճարում, իսկ հետագա հանդիսությունը շարունակվեց Մարսյան դաշտում՝ հեղափոխական ավանդույթները պատվելու և շեշտելու նպատակով: 1804 թ. դեկտեմբերի 2-ին հանդիսավոր պայմաններում՝ Հռոմի պապ Պիոս 7-րդի օրհնությամբ Նապոլեոնը, ինչպես և նախատեսված էր, ինքն իրեն թագադրեց ֆրանսիացիների կայսր, այնուհետև արտասանեց քաղաքացիական երդումը: Այժմ Նապոլեոնը կայսր էր «Աստծո կամոք և Հանրապետության սահմանադրությամբ»⁴⁵: Այսպիսով, թագադրելով ինքն իրեն՝ Նապոլեոնը փաստորեն թագադրում էր Ֆրանսիական հեղափոխությունը և նրա սկզբունքները: Կայսեր քաղաքացիական երդման տեքստը, որն արտասանեց Նապոլեոնը, պարտավորեցնում էր պաշտպանել Հանրապետության ամբողջականությունը, հարգել քաղաքացիների հավասարությունը, քաղաքացիական ազատություններն ու իրավունքները: Այս համատեքստում հատկանշական է «ազգային գվարդիայի» (*Garde nationale*) պահպանումը, որը, ի տարբերություն Եվրոպայում տարածված «թագավորական գվարդիաների», «ազգի պահապանն» էր, ոչ թե դինաս-

40 **Woloch Isser**, *Napoleon and His Collaborators: The Making of a Dictatorship*. New York and London: Norton & Company, 2001, p. 98.

41 **Ленин Тьерри**, նշվ. աշխ., էջ 79-82: Սկսվեց Հանրապետության միապետականացումը: 19-րդ դարասկզբի մարդկանց համար, ովքեր ծնվել էին ժառանգական բացարձակ միապետության պայմաններում, սա նորարարական և բավականին առաջադիմական մոտեցում էր:

42 Տե՛ս **Սանֆրեդ Ա. Զ.**, նշվ. աշխ., էջ 454-455:

43 Տե՛ս **Conner Susan P.**, նշվ. աշխ., էջ 33-35:

44 Տե՛ս **Woloch Isser**, նշվ. աշխ., էջ 109-110:

45 **Ленин Тьерри**, նշվ. աշխ., էջ 83-86:

տիաների⁴⁶:

1806 թ. հուլիսին գերմանական իշխանությունները, լքելով Սրբազան հռոմեական կայսրությունը, ձևավորեցին Հռենոսյան համադաշնությունը՝ Նապոլեոնին ճանաչելով իբրև «պաշտպան» (Protecteur)⁴⁷: Այս կերպ Նապոլեոնը վերացրեց Սրբազան հռոմեական կայսրությունը, որն արդեն 18-րդ դարում Վոլտերի բնորոշմամբ՝ «ոչ սրբազան էր, ոչ հռոմեական և ոչ էլ կայսրություն»⁴⁸: Սրբազան հռոմեական կայսրության վերջին կայսր Ֆրանց 2-րդը 1806 թ. օգոստոսի 6-ին հրաժարվեց գահից: Մինչ այդ՝ 1804 թ. օգոստոսի 11-ին, նա արդեն ինքն իրեն հռչակել էր Ավստրիայի կայսր Ֆրանց 1-ին (1804-1835 թթ.) անունով, քանզի Նապոլեոնը ևս իշխում էր հռոմեական կերպով և ավելի շատ էր «հռոմեական կայսր», քան ինքը: Իրեն հռչակելով Կարլոս Մեծի հետևորդ՝ Նապոլեոնը Վիեննային ցույց տվեց, որ իրենք իրավունք չունեն «ինչ-որ մի ավստրիական էրցհերցոգի» դնել Սրբազան հռոմեական կայսրության գլուխ: Այս քայլով Նապոլեոնը գերմանական և իտալական գործերին միջամտելու լեգիտիմություն էր ապահովում: Ըստ այդմ, 1805 թ. մայիսի 28-ին ֆրանսիացիների կայսրը հռչակվեց նաև Իտալիայի թագավոր: Ինքը՝ Նապոլեոնը, հաճախ հղում էր կատարում իր՝ «Կարլոս Մեծի հետևորդը լինելու» հանգամանքին: Հատկանշական է, որ Հռոմի պապի հետ հակամարտության համատեքստում Նապոլեոնը գրում է. «Ասացեք նրան, որ ես Կարլոս Մեծն եմ»⁴⁹:

Այս հավաքական հիշողության վերածնունդ մեծ նշանակություն ուներ միջազգային հարաբերությունների նապոլեոնյան հարացույցում, որն ընդգրկում էր այն պետություններին, որոնք իրենց ինքնիշխանությունը կառուցել էին Ֆրանկների կայսրության փլատակների վրա (Գերմանիայում, Իտալիայում և այլուր): Ըստ այդմ, Հոլանդիայում թագավոր հռչակվեց Լուի Բոնապարտը, Վեստֆալիայում՝ Ժերոմ Բոնապարտը, Նեապոլում՝ Հովակիմ Սյուրատը, Իսպանիայում՝ Ժոզեֆ Բոնապարտը, ինքը՝ Նապոլեոնն ամուսնացավ Ավստրիայի կայսր Ֆրանց 1-ինի դստեր հետ: Այսպես, 1810 թ. դրությամբ Եվրոպայի մեծագույն մասը գտնվում էր Նապոլեոնի անմիջական կամ միջնորդավորված վերահսկողության տակ⁵⁰: Այս կերպ, կարծես թե, Նապոլեոնը բեմադրում էր եվրոպական ընտանիքի գաղափարը. դեկավարելով իր ընտանիքը՝ նա կառավարում էր եվրոպական ազգերի ընտանիքը:

Նապոլեոնի բարեփոխիչ քաղաքականությունը խթանեց եվրոպական պետությունների և հասարակությունների արդիականացման գործընթացը: Անհրաժեշտ էր իրավական ձևակերպում տալ հեղափոխությամբ հաստատված համակեցությանին նոր իրողություններին: Եվ այս բարեփոխումների գլխավոր իրավական փաստաթուղթը դարձավ Նապոլեոնի «Քա-

46 Stéu Ashby Ralph, *Napoleon against Great Odds: the Emperor and the Defenders of France*. Santa Barbara: ABC-CLIO, 2010, էջ 79-86. Ազգային գվարդիայի համագգեստը արտահայտում էր ֆրանսիական հանրապետության եռագույնի գույները: Գվարդիականներն իրենք պետք է հոգային իրենց ծառայողական ծախսերը, ինչը ենթադրում էր անդամություն մեծ մասամբ ունեոր քաղաքացիներից: Հեղափոխության տարիներին Ազգային գվարդիան կարևոր բուրժուական հաստատություն էր:

47 Stéu Grab Alexander, նշվ. աշխ., էջ 12:

48 Schneid Frederick C., նշվ. աշխ., էջ 38:

49 Лещ Тьерри, նշվ. աշխ., էջ 90-93:

50 Stéu Hause Steven and Maltby William, նշվ. աշխ., էջ 411-412:

ղաքացիական օրենսգիրքը», որը թարգմանվեց բազմաթիվ լեզուներով և կիրառվեց բազում երկրներում: Այս կերպ «Քաղաքացիական օրենսգիրքը» հավերժացրեց հեղափոխության ձեռքբերումները⁵¹: 19-րդ դարասկզբի Եվրոպայում արդիականացումը նշանակում էր՝ արդյունավետ բյուրոկրատական համակարգով կենտրոնացված պետություններ, միակերպ հարկային և մաքսային համակարգ, զորակոչային ազգային բանակներ, ոստիկանություն (gendarmerie), ազնվականության արտոնյալ կարգավիճակի վերացում, հոգուտ պետության եկեղեցու իրավունքների կրճատման միջոցով պետության և եկեղեցու տարանջատում (secularization), բուրժուազիայի քաղաքական և սոցիալական դերի բարձրացում, իրավական հավասարություն, երաշխավորված սեփականատիրական իրավունքներ, ազգային շուկաների ձևավորում և այլն: Նապոլեոնյան պետությունը աշխարհիկ պետություն էր, որում իրավաբանորեն ճանաչվում էր կրոնական ինքնորոշման գաղափարը: 1801 թ. հուլիսի 15-ին Նապոլեոնը կոնկորդատ⁵² կնքեց Հռոմի պապի հետ, որով պետությունը ճանաչեց, որ կաթոլիկությունը «ֆրանսիացիների մեծամասնության կրոնն է» (այլ ոչ թե պետության)⁵³: Կոնկորդատով Պիոս 7-րդ պապը ստիպված էր համաձայնել, որ Ֆրանսիայի բոլոր հոգևորականները պետական վարձատրությամբ ծառայողներ են և հավատարմության երդում են տալիս պետությանը⁵⁴: Բոնապարտի համակարգային բարեփոխումները, որոնք ընդգրկում էին հասարակության բոլոր շերտերը, նպաստեցին լայն միջին խավի ձևավորմանը և նրա ժողովրդականության բարձրացմանը իբրև ազգային ղեկավարի:

Այսպիսով, Նապոլեոնյան Ֆրանսիան իր ժամանակի համատեքստում իրավական պետություն էր և իր ժամանակի ավանդական միապետություններից տարբերվում էր կենտրոնացված արդյունավետ կառավարման համակարգով, աշխարհիկությամբ, հավասարության սկզբունքի կիրառման հետևողականությամբ և հանրաքվեի միջոցով «աբսոլյուտիզմի ժողովրդավարացմամբ»⁵⁵: Եվ այս առումով Ֆրանսիան հեղափոխական էր մնում Եվրոպայի համար:

Միաժամանակ Նապոլեոնը գործում էր Եվրոպայի միասնականացման ուղղությամբ⁵⁶: Բացի այդ, ֆրանսիացիների կայսեր ձեռնարկումները Գերմանիայի, ինչպես նաև Իտալիայի միավորման և իբրև ազգային պետությունների կայացման կարևոր փուլ հանդիսացան: Մասնավորապես, 1806 թ. հուլիսին ստեղծվեց Հռենոսյան համադաշնությունը, 1807 թ.՝ Վեստֆալիայի թագավորությունը և այլն: Գերմանական «անկախ պետությունների» թիվը 300-ից նվազեց մինչև 39-ի: Իտալիան ևս համախմբվեց. մինչև հեղափոխական տասը պետությունները միավորվեցին երեքի մեջ: 1807 թ. Վարշավայի դքսության ձևավորումը նպաստեց լեհական ազգային ինքնորոշման ձգտումների զարգացմանը⁵⁷:

51 Տե՛ս Conner Susan P., նշվ. աշխ., էջ 41-44:

52 Տե՛ս Dwyer Philip G. and McPhee Peter (ed.), The French Revolution and Napoleon: A sourcebook. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2003, pp. 149-152.

53 Տե՛ս Лемц Тьерри, նշվ. աշխ., էջ 70:

54 Տե՛ս Hause Steven and Maltby William, նշվ. աշխ., էջ 409-410:

55 Лемц Тьерри, նշվ. աշխ., էջ 118:

56 Տե՛ս McLynn Frank, նշվ. աշխ., էջ 664:

57 Տե՛ս Grab Alexander, նշվ. աշխ., էջ 20-21, 209:

Ֆրանսիական կայսրության հեգեմոնիան Եվրոպայում իր բարձրագույն աստիճանին հասավ 1810 թ.⁵⁸ ձգվելով Փարիզից մինչև Բալկաններ, Մադրիդից Վարշավա և Նեապոլից Համբուրգ։ Նապոլեոնյան «Մեծ կայսրությունը» կազմող այս տարածքները բաժանվում էին 3 խմբի՝ միացված տարածքներ (pays réunis), նվաճված երկրներ (pays conquis) և դաշնակից պետություններ (pays alliés)։ Առաջին խումբը բաղկացած էր այն տարածքներից, որոնք միակցվել էին Ֆրանսիային և ուղղակիորեն կառավարվում էին Նապոլեոնի կողմից, սա կազմում էր Ֆրանսիացիների կայսրությունը։ Երկրորդ խումբը կազմված էր արբանյակ-պետություններից, որոնք վստահվել էին ֆրանսիացի կառավարիչների։ Երրորդ խումբը դաշնակից պետություններն էին, որոնց տարածքները որոշ դեպքերում ընդարձակվել էին Նապոլեոնի կողմից, և որոնցում թողնվել էին նախկին կառավարիչները⁵⁸։ Նապոլեոնյան այս «Մեծ կայսրությունը» ներկայանում էր իբրև միջազգային հարաբերությունների համակարգ։ Եվ այս «միջազգային հարաբերությունների նապոլեոնյան համակարգում» ճանաչվում էին ազգային ինքնիշխանության, եղբայրական հավասարության ու ազատության գաղափարները։

18-րդ դարի վերջին՝ դեռևս ֆրանսիական հեղափոխությունից առաջ, այլընտրանքի մեկ այլ հնարավորություն նշմարվեց օվկիանոսից անդին՝ ամերիկյան հեղափոխությամբ, որի արդյունքում առաջացավ Արևմտյան կիսագնդի առաջին ազգ-պետությունը՝ հռչակելով ազատության, իրավահավասարության և ազգերի ինքնորոշման համընդհանրական գաղափարները⁵⁹։

Քիչ անց՝ 1814 թ. մայիսի 30-ին, իր այս բեկումնային նախագծում պարտված Ֆրանսիան յոթ պայմանագրեր կնքեց դաշնակիցների (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ավստրիա, Պրուսիա, Իսպանիա, Շվեդիա և Պորտուգալիա) հետ, որոնք հավաքական կերպով հայտնի են որպես Փարիզի առաջին պայմանագիր։ Պայմանագրով նախատեսվում էր Վիեննայում կոնգրես հրավիրել հետնապոլեոնյան աշխարհակարգի նախագծման համար⁶⁰։ Հալանապոլեոնյան խմբավորումը հանդես էր գալիս իբրև միապետության և հին կարգերի մյուս հաստատությունների պաշտպան։ 1815-1848 թթ. ընթացքում հաղթանակած պահպանողականները ձգտում էին վերականգնել իրենց աշխարհը, ինչը վերջին հաշվով կասեցվեց ազգային լիբերալ հեղափոխությունների շղթայով⁶¹։ Իսկ մինչ այդ Նապոլեոնին հաղթողները Վիեննայի կոնգրեսում (1814 թ. սեպտեմբերից մինչև 1815 թ. հունիս) վերականգնեցին «Եվրոպական հավասարակշռությունը» և մինչպատերազմյան աշխարհակարգը։ Ֆրանսիայում վերականգնվեց Բուրբոնների գահը, և

58 Տես **Grab Alexander**, նշվ. աշխ., էջ 2, 17-18։

59 Տես **The text of the Declaration of Independence**, Philadelphia: July 4, 1776. A Century of Lawmaking for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 - 1875, Journals of the Continental Congress, Volume 5, pp. 510-515. «Ամերիկյան ժողովրդավարության արտահանումը», սակայն, պետք է սկսվեր միայն 20-րդ դարի սկզբին, իսկ այդժամ ԱՄՆ-ի հիմնադիր հայրերը կարծում էին, որ միջազգային կարգուկանոնը կախված է հակադիր ազգային շահերի միջև հավասարակշռության պահպանումից և ոչ թե հավաքական անվտանգությունից։

60 Տես **Simpson Gerry**, Great Powers and Outlaw States: Unequal Sovereigns in the International Legal Order. New York: Cambridge University Press, 2004, էջ 97։

61 Տես **Hause Steven and Maltby William**, նշվ. աշխ., էջ 458։

թագավոր դարձավ Լուի 18-րդը (1814-1824 թթ.), ում դաշնակիցները համարում էին հակահեղափոխական դաշինքի անդամ: Ըստ այդմ, Ֆրանսիան կորցրեց միայն հեղափոխական շրջանի իր տարածքային ձեռքբերումները՝ պահպանելով 1792 թ. սահմանները⁶²:

4. Վիեննայի աշխարհակարգը և «Եվրոպական համերաշխությունը»

Ֆրանսիացիների կայսրության և Նապոլեոնյան համակարգի (système napoléonien) անկումից հետո միապետները և նրանց դիվանագետները հայտարարեցին եվրոպական հավասարակշռությունը (l'équilibre européen) վերականգնելու իրենց մտադրության մասին: Համընդհանուր ոգևորության պայմաններում ունանց թվում էր, թե Վիեննայի կոնգրեսը կվերածվի «թագավորների սենատի» («sénat de tous les rois»), որի որոշումներին ականջալուր կլինի ողջ Եվրոպան նաև ապագայում⁶³: Իրականում Վիեննայում կայացված որոշումները հույժ ինքնաշահ էին: Վիեննայի կոնգրեսը կատարեց տարածքների վերաբաժանում և գծեց Եվրոպայի նոր սահմանները: Ուժերի հավասարակշռության սկզբունքը դարձավ այս աշխարհակարգի հիմնական կարգավորիչը: Ձևավորվեց «Սրբազան դաշինքը»՝ եղած իրավիճակը պահպանելու և «Եվրոպան ժողովրդավարությունից անվտանգ դարձնելու համար»⁶⁴:

Սկզբում Վիեննայի կոնգրեսում որոշումները կայացվում էին հաղթանակած քառյակի (Մեծ Բրիտանիա, Ռուսաստան, Պրուսիա, Ավստրիա) կողմից: Ըստ այդմ, իրավաբանորեն ամրացվեց պետությունների իրավական անհավասարությունը. «պետություններ՝ շահերի լայն ոլորտով» և «պետություններ՝ շահերի նեղ ոլորտով»⁶⁵: Առաջ քաշվեց «մեծ տերություն» հղացքը. «մեծ» էին համարվում Նապոլեոնին հաղթած տերությունները (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ավստրիա և Պրուսիա): Թալեյրանի ջանքերով Ֆրանսիան հաղթող պետությունների շարքում նույնպես ձանաչվեց իբրև «մեծ տերություն»⁶⁶: Արդեն 1815 թ. հունվարին չորս մեծ տերությունները կարևոր որոշումների կայացման իրենց մեխանիզմում ընդունեցին նաև Ֆրանսիային, և այս մեծ հնգյակի հանձնաժողովը դարձավ Կոնգրեսի ուղղորդողը: Ըստ այդմ, Վիեննայի աշխարհակարգի հիմնական նախագծողներն էին Մետերնիխը, Քեսլին, Թալեյրանը, Ալեքսանդր 1-ինը և Հումբոլդտը: Այս կերպ, Վեստֆալում պետական ինքնիշխանության և իրավա-

62 Տե՛ս նույն տեղում, էջ 459:

63 Տե՛ս **Lentz Thierry**, Le congrès de Vienne: Une refondation de l'Europe 1814-1815. Paris: éditions Perrin, 2013, էջ 35-38.

64 **Simpson Gerry**, նշվ. աշխ., էջ 323:

65 Տե՛ս **Зюнова Т. В.**, Вестфальская система. Вестник МГИМО, 2008, N 1, էջ 79. Ինչպես Պրուսիայի արտաքին գործերի մինիստր բարոն ֆոն Հումբոլդտը էր մեկնաբանում, դրանք այն տերություններն էին, որոնք ունեին աշխարհագրորեն անդրանցային շահեր:

66 Տե՛ս **Зюнова Т. В.**, նշվ. աշխ., էջ 80: Հետագայում մեծ տերությունների համաստեղությանը միացան Օսմանյան կայսրությունը (Ղրիմի պատերազմից հետո), Իտալիան (միավորումից հետո), Գերմանական կայսրությունը (Ֆրանս-պրուսական պատերազմից հետո), Ամերիկայի Միացյալ Նահանգները (Իսպանո-ամերիկյան պատերազմից հետո), Ճապոնիան (Ռուս-ճապոնական պատերազմից հետո):

հավասարության սկզբունքներով հաստատված «դեմոկրատական» միջազգային համակարգը Վիեննայում փոխակերպվեց «օլիգարխիկ» միջազգային համակարգի⁶⁷: Այստեղ գործ ունենք այնպիսի գործընթացի հետ, երբ հեղափոխական իրավիճակներում քաղաքական իրողությունները կերպափոխվում են իրավական կանոնների:

Վիեննայում էին հավաքվել շուրջ երեք հարյուր պաշտոնական պատվիրակություններ, որոնցից հարյուրը ներկայացնում էին պետություններ կամ անկախ քաղաքական միավորներ: Այդ թվում էին Փարիզի պայմանագիրը ստորագրած ութ տերությունները (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Պրուսիա, Իսպանիա, Շվեդիա և Պորտուգալիա), երեսուներեք գերմանական պետություններ կամ ազատ քաղաքներ, տասնյակ այլ եվրոպական ինքնիշխան քաղաքական միավորներ Իտալիայից և այլ վայրերից⁶⁸:

Վիեննայի կոնգրեսում հստակ սահմանազատում կար մեծ տերությունների և մնացածի միջև. նրանց միջև հարաբերությունները հիերարխիկ էին: «Մեծ տերություն» հղացքը գոյություն ուներ նաև մինչև Վիեննայի կոնգրեսը, բայց միայն որպես քաղաքական գաղափար. Կոնգրեսում այն ձանաչվեց իբրև իրավական կարգավիճակ⁶⁹: Ի տարբերություն մինչև Վեստֆալի կոնգրեսը գոյություն ունեցող հիերարխիկ համակարգի, որը ներկայանում էր ուղղահայաց վերազգային կառավարության կերպով⁷⁰, սա նշանակալի նորարարություն էր եվրոպական համակարգում: Մեծ տերությունների այդ կռալիցիան ձևավորվեց Նապոլեոնյան պատերազմների ընթացքում և հաստատութենականացվեց 1815 թ. Վիեննայի կոնգրեսում: Դեռևս 1814 թ. սկզբին չորս տերությունները (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ավստրիա և Պրուսիա) Լանգրեսի գաղտնի պայմանագրով համաձայնում էին իրենցով կայացնել հետպատերազմյան վերակառուցմանը վերաբերող բոլոր հիմնական որոշումները՝ հաստատելով, որ ուժերի հավասարակշռությունն է ժամանակի գլխավոր գաղափարը, այլ ոչ թե ինքնիշխան հավասարությունը⁷¹:

Ուժերի հավասարակշռության համակարգը ընդգրկում էր հինգ մեծ տերություններ. երկուսը՝ եզրերում, երեքը՝ կենտրոնում: Երկու եզրային տերություններից յուրաքանչյուրը տիրապետում էր ավելի մեծ ռեսուրսների, քան կենտրոնի տերությունները: Եզրային տերություններից Ռուսաստանն ուներ ամենաընդարձակ տարածքը, ամենամեծ բնակչությունը և ամենամեծ մշտական ցամաքային բանակը, մինչդեռ Մեծ Բրիտանիան գերիշխում էր ծովերում, աշխարհի առաջատար արդյունաբերական պետությունն էր և ուներ ամենաընդարձակ գաղութային կայսրությունը: Այս երկու եզրային տերություններն ունեին նաև որոշակի աշխարհագրական անխոցելիություն, ինչպես դա ցույց տվեց Նապոլեոնի ծավալապաշտական ծրագրերի

67 Տե՛ս **Եփրեմյան Տ.**, Վեստֆալյան աշխարհակարգի ձևավորման պատմությունից, «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, Եր., ԵՊՀ հրատ., 2014, էջ 219-227:

68 Տե՛ս **Lentz Thierry**, նշվ. աշխ., էջ 49-53:

69 Տե՛ս **Simpson Gerry**, նշվ. աշխ., էջ 96:

70 Տե՛ս **Larkins Jeremy**, From Hierarchy to Anarchy: Territory and Politics before Westphalia, New York: Palgrave Macmillan, 2010, էջ 3-4.

71 Տե՛ս **Simpson Gerry**, նշվ. աշխ., էջ 97-103:

ձախողումը այդ երկու ուղություններով: Ուժերի տեղաբաշխումը Եվրոպայում այնպիսին էր, որ նույնիսկ կենտրոնի երեք մեծ տերությունների՝ Ֆրանսիայի, Ավստրիայի և Պրուսիայի անհավանական համարվող դաշինքը չէր վտանգի եզրային մեծ տերությունների անվտանգությունը: Այս կերպ Ռուսաստանը և Մեծ Բրիտանիան, ի տարբերություն կենտրոնի տերությունների, կախված չէին դաշինքներից՝ իրենց անվտանգության ապահովման տեսանկյունից⁷²: Մեծ տերություններից յուրաքանչյուրը «հավասարակշռության» (equilibrium) հղացքը յուրովի էր ընկալում⁷³: Լոնդոնում և Պետերբուրգում ցանկանում էին շարունակական միջամտություններով իրենց շահերին համապատասխան պահպանել և ապահովել ուժերի հավասարակշռությունը Եվրոպայում⁷⁴:

Արդյունքում՝ ինքնիշխան հավասարության (sovereign equality) Վեստֆալյան ձևը Վիեննայում փոխարինվեց իրավաբանական ինքնիշխանության: Ինքնիշխան հավասարության սկզբունքը այժմ գործում էր միայն մեծ տերությունների միջև հարաբերություններում, որոնք միջազգային ասպարեզում գործում էին որոշակիորեն սահմանադրված ներդաշնակության: Գ. Սիմփսոնը այս երևույթը բնորոշում է «օրինականացված հեգեմոնիա» («legalised hegemony») եզրույթով⁷⁵:

Վիեննայի կոնգրեսում մեծ տերությունների հեգեմոնիայի և պետությունների իրավահավասարության գաղափարների բախումը վերածվեց երկխոսության՝ «օրինականացված հեգեմոնիայի» միջոցով «Եվրոպական համերաշխության» պաշտպանների և նրանց միջև, ովքեր նախընտրում էին ավելի ներկայացուցչական և իրավահավասար համակարգ: Արդյունքում առաջացավ ներդաշնակություն, ինչը բնութագրական էր Վիեննայի աշխարհակարգի գոյության ողջ ընթացքի համար ընդհուպ Առաջին աշխարհամարտը (1914 թ.)⁷⁶: Անշուշտ, ձգնաժամային իրավիճակներն ուղեկցում էին Համակարգին այս շուրջ հարյուրամյա ժամանակահատվածում. նախ՝ Դրիմի պատերազմը (1853-1856 թթ.), ապա՝ Ֆրանս-պրուսական (1870-1871 թթ.) ու Ռուս-թուրքական (1877-1878 թթ.) պատերազմները և այլն: Այդուամենայնիվ, մեծ տերությունները կարողանում էին օգտագործել այդ հույժ կարևոր հնարավորությունները (Փարիզում՝ 1856 թ., Ֆրանկֆուրտում՝ 1871 թ., Բեռլինում՝ 1878 թ. և այլուր)՝ նորոգելու համար Համա-

72 Տե՛ս **Schroeder Paul W.**, Did the Vienna Settlement Rest on a Balance of Power? The American Historical Review, Vol. 97, No. 3 (The University of Chicago Press, Jun., 1992), էջ 686-687.

73 Տե՛ս **Kissinger Henry A.**, The Congress of Vienna: A Reappraisal, World Politics, Vol. 8, No. 2 (Cambridge University Press, Jan., 1956), էջ 266-267. Ըստ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Քեյթրիի՝ «հավասարակշռությունը» Եվրոպայում որևէ մի տերության գերիշխանության բացառումն էր: Մետերնիխի համար «հավասարակշռությունը» Գերմանիայում Պրուսիայի գերիշխանության բացառումն էր: Քեյթրին ջանում էր ստեղծել կենտրոնական Եվրոպա, որը բավականաչափ հզոր կլիներ դիմակայելու հարձակումների և արևելքից, և՛ արևմուտքից, բայց միաժամանակ՝ այնքան թույլ կապակցված, որ ինքնուրույն նախաձեռնություն չցուցաբերեր:

74 Տե՛ս **Kennedy Paul M.**, The Rise and Fall of the Great Powers: Economic Change and Military Conflict from 1500 to 2000. London, Sydney and Wellington: Unwin Hyman, 1988, էջ 74.

75 Տե՛ս **Simpson Gerry**, նշվ. աշխ., էջ 68. «Միջազգային հանրությունում հզոր պետությունների ընտրանու գոյությունը, որոնց գերակա կարգավիճակը իբրև քաղաքական փաստ ճանաչված է կրտսեր ուժերի կողմից, հանգեցնում է նրանց որոշակի սահմանադրական առավելությունների, իրավունքների և պարտականությունների առաջացմանը, և այդ ընտրանու մեջ փոխհարաբերությունները որոշվում են ինքնիշխան հավասարության կոշտ սկզբունքով»:

76 Տե՛ս նույն տեղում, էջ 104-109, 154:

կարգը⁷⁷:

Վիեննայի կոնգրեսում Թալեյրանը առաջ քաշեց «լեգիտիմիզմի» (օրինականության) գաղափարը, որի համաձայն՝ եվրոպական տերությունները տարածքների վերաբաժանում կատարելիս և հետպատերազմյան աշխարհակարգը նախագծելիս պետք է օրինական հիմք ընդունեն այն, ինչ գոյություն ուներ մինչև հեղափոխական պատերազմի սկիզբը (1792 թ.): Հայսմ եթե Վիեննայի վեհաժողովում ղեկավարվեին «լեգիտիմության» սկզբունքով, ապա կերաշխավորվեր Ֆրանսիայի տարածքային ամբողջականությունը և միջազգային հեղինակությունը: Մյուս կողմից կսահմանափակվեին Ռուսաստանի և Պրուսիայի տարածքային հավակնությունները⁷⁸: Լեգիտիմության սկզբունքի (*principe de légitimité*) մեջ Թալեյրանը տեսնում էր Եվրոպայի վերակազմակերպման բարոյական և իրավական հիմքերը⁷⁹: Այս կերպ Վիեննայի կոնգրեսում պահպանողական ուժերը ձգտում էին վերականգնել մինչհեղափոխական սոցիալական կարգերը, սահմանները և միապետների իրավունքները:

Մյուս կարևոր սկզբունքը փոխհատուցման (*compensation*) սկզբունքն էր, որի կիրարկմամբ դաշնակից քառակուսյա բռնակցեց տարածքներ՝ առանց հաշվի առնելու լեգիտիմության սկզբունքը: Ռուսաստանը ստացավ Ֆինլանդիան և Լեհաստանի մեծ մասը, իսկ Պրուսիան՝ Սաքսոնիայի մի մասը, Վեստֆալիան և մի քանի իշխանություններ Հռենոսյան ավազանում: Բերնադոտի ջանքերով ձանաչվեց Նորվեգիայի միացումը Շվեդիային⁸⁰: Ավստրիան և Բրիտանիան ևս պահանջեցին փոխհատուցում՝ հավասարակշռելու համար Ռուսաստանի և Պրուսիայի ձեռքբերումները, ինչը երկուսն ընդեն երկուսի ձգնաժամ առաջացրեց մեծ տերությունների միջև, մինչև որ նրանց միացավ հինգերորդ կողմը՝ Ֆրանսիան՝ ի դեմս արտգործնախարար Շառլ Մորիս դե Թալեյրանի, ով պաշտպանեց Բրիտանիայի և Ավստրիայի փոխհատուցման պահանջները: Ավստրիան վերականգնեց իր տիրույթները հյուսիսային Իտալիայում՝ Լոմբարդիան և Վենետիկյան հանրապետությունը⁸¹: Բրիտանիան ստացավ նոր գաղութներ Ասիայում, Աֆրիկայում և Ամերիկայում, ինչպես նաև Մալթան: «Լեգիտիմության» սկզբունքը չկիրառվեց նաև Սրբազան հռոմեական կայսրության վերականգնման հարցում, որը համադաշնային սկզբունքով միավորում էր ավելի քան երկու հարյուր գերմանական պետությունների կենտրոնական Եվրոպայում և կազմալուծվել էր 1806 թ. Նապոլեոնի կողմից: Փոխարենը դաշնակիցները ստեղծեցին Գերմանական համադաշնությունը Ֆրանկֆուրտ կենտրոնով և թույլ պառլամենտով, որը միավորում էր 39 գերմանական պետությունների⁸²:

1815 թ. հունիսի 9-ին ստորագրվեց Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտը⁸³: Այստեղ գետնից հանվեց Գերմանական համադաշնության, ինչպես նաև Բելգիայից ու Հոլանդիայից ձևավորված Նիդերլանդական թագավո-

77 Տե՛ս **Кортунов С. В.**, Крушение Вестфальской системы международных отношений и становление нового мирового порядка. В кн.: Мировая политика. Москва: Изд. дом ГУ-ВШЭ, 2007, էջ 75–117.

78 Տե՛ս **Schroeder Paul W.**, նշվ. աշխ., էջ 696:

79 Տե՛ս **Lentz Thierry**, նշվ. աշխ., էջ 78–80:

80 Տե՛ս նույն տեղում, էջ 150–151:

81 Տե՛ս **Kissinger, Henry A.** (1956), նշվ. աշխ., էջ 274–278:

82 Տե՛ս **Hause Steven and Maltby William**, նշվ. աշխ., էջ 460–461:

83 Տե՛ս **Lentz Thierry**, նշվ. աշխ., էջ 328–351:

րության ստեղծման ակտերը: Մասնավորապես, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև բաժանվեց Լեհաստանը: Իտալիան, որը Բոնապարտի բարեփոխումների շնորհիվ, ըստ էության, վեր էր անվել ազգային և քաղաքական միավորի, կրկին իջեցվեց լոկ աշխարհագրական եզրույթի մակարդակի⁸⁴: Եզրափակիչ ակտի մեջ մտցվեց նաև 17 առանձին ծանոթագրություն՝ հռչակագիր ստրկավաճառության արգելման, գետային ուղիների ազատ նավարկության, դիվանագիտական ներկայացուցիչների ավագության աստիճանակարգի մասին և այլն⁸⁵:

Վիեննայի եզրափակիչ ակտի ստորագրումից հետո Ֆրանսիան ևս երեք տարի շարունակեց օկուպացված մնալ դաշնակիցների բանակների կողմից: Սակայն Եվրոպայի պահպանողական ուժերին շարունակում էին սպառնալ Ֆրանսիական հեղափոխության գաղափարները ազատության, հավասարության և ազգային ինքնիշխանության վերաբերյալ⁸⁶:

1815 թ. նոյեմբերի 20-ի Փարիզի երկրորդ պայմանագրով եվրոպական տերությունները համաձայնում էին ապագա խնդիրները լուծել կոլեկտիվ-խորհրդակցական մեթոդներով⁸⁷: Վիեննայի կոնգրեսում մշակված աշխարհակարգում հինգ մեծ տերությունների (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ավստրիա և Պրուսիա) միջև փոխհամաձայնությունից էր պայմանավորված կոլեկտիվ գործողությունների իրավունքը⁸⁸: Ըստ եվրոպական համերաշխության հղացքի՝ միջազգային համակարգը կառավարվում էր մեծ տերությունների կողմից ջանքերով⁸⁹: Եվ Մեծ Բրիտանիան առաջինն էր հավասարների մեջ ակտիվ հավասարակշռման իր քաղաքականությամբ⁹⁰:

1815 թ. սեպտեմբերի 26-ին համայն Ռուսիո կայսր Ալեքսանդր 1-ինի, Ավստրիայի կայսր Ֆրանց 1-ինի և Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ-Վիլհելմ 3-րդի միջև կնքվեց «Սրբազան դաշինքը»⁹¹: Այս դաշինքն առաջնորդվում էր սոցիալ-քաղաքական պահպանողականության գաղափարաբանությամբ և նպատակաուղծված էր վերացնելու նապոլեոնյան լիբերալ հեղափոխական քաղաքականության ազդեցությունը: 1815-1817 թթ. դաշինքին միացան Եվրոպայի գրեթե բոլոր միապետությունները, բացառությամբ Մեծ Բրիտանիայի, Հռոմի պապի և Օսմանյան կայսրության: «Սրբազան դաշինքը», քողարկվելով քրիստոնեական եղբայրության, Սուրբ գրքի վարդապետությունների և լեգիտիմիզմի սկզբունքներով, իր գլխավոր խնդիրն էր համարում Եվրոպայի բոլոր միապետական պահպանողական ուժերի հա-

84 Տե՛ս Լավիսս Է., Քամբո Ա., История XIX века / пер. с фр., изд. под. ред. Е. В. Тарле, т. 3, Время реакции и конституционные монархии; ОГИЗ, Москва, 1938, էջ 63-65.

85 Տե՛ս Մուրադյան Մ., Մինայան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.), - Եր., Երևանի համալս. հրատ., 2005, էջ 219:

86 Տե՛ս Լավիսս Է., Քամբո Ա., նշվ. աշխ., էջ 68:

87 Տե՛ս Simpson Gerry, նշվ. աշխ., էջ 114:

88 Տե՛ս Lentz Thierry, նշվ. աշխ., էջ 93-95:

89 Տե՛ս Rosenau James N. and Czempiel Ernst-Otto (ed.), Governance without Government: Order and Change in World Politics. Cambridge, New York: Cambridge University Press, 2003, էջ 34.

90 Տե՛ս Lowe John, Britain and Foreign Affaris, 1815-1885: Europe and overseas. London and New York: Routledge, Taylor & Francis e-Library, 2005, p. 88. 1815 թ. Վաթեռլոոյի ճակատամարտից մինչև Առաջին աշխարհամարտ (1914 թ.) ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիան գերիշխող դիրքեր էր գրավել միջազգային հարաբերություններում: Համաշխարհային պատմության այս շրջափուլը բնորոշվում է նաև «բրիտանական խաղաղություն» (Pax Britannica) եզրույթով:

91 Տե՛ս Լավիսս Է., Քամբո Ա., նշվ. աշխ., էջ 69-70:

մախմբումն ընդդեմ հեղափոխական լիբերալ և ազգային շարժումների⁹²:

Դաշնակիցները նաև պաշտպանում էին պահպանողական կարգը՝ պլանավորելով կանոնավոր հանդիպումներ և կոնգրեսներ միջազգային խնդիրները քննարկելու համար⁹³: Այսպիսով, եթե Վիեննայի վեհաժողովում տեսականորեն հիմնավորվեց Թալեյրանի լեգիտիմիզմի գաղափարը, ապա «Սրբազան դաշինքի» վեհաժողովները Ահենում (1818 թ. սեպտեմբերի 20-ից նոյեմբերի 29-ը), Տրոպաույում (1820 թ. հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 19-ը), Լայբախում (1821 թ. հունվարի 26-ից մայիսի 12-ը), Վերոնայում (1822 թ. հոկտեմբերի 20-ից դեկտեմբերի 14-ը) լեգիտիմիզմի սկզբունքին ավելացրին Մետերնիխի կողմից մշակված՝ այլ պետությունների ներքին գործերին միջամտելու տեսությունը՝ հեղափոխական շարժումները ճնշելու և ռազմական ներխուժման օրինականությունը⁹⁴:

Վիեննայի վեհաժողովում ընդունված քաղաքական ու դիվանագիտական բոլոր փաստաթղթերը կազմվեցին «միջամտելու տեսության» շրջանակներում՝ հիմք ընդունելով լեգիտիմիզմի սկզբունքը: Լեգիտիմիզմի, այսինքն՝ միապետների օրինական իրավունքների վերականգնման սկզբունքը միապետական պահպանողական ուժերի ձեռքին դարձավ գաղափարաիրավական հզոր գեղք՝ Եվրոպայի քաղաքական քարտեզը վերաձևելու, նապոլեոնյան պատերազմների տարիներին ի վնաս արքայատների պետական-քաղաքական խախտված սահմանները սեփական շահերին համապատասխան վերափոխելու համար⁹⁵: 1821 թ. Լայբախում և 1822 թ. Վերոնայում վերջնական տեսքի բերված «միջամտելու տեսությունը» (“theory of intervention”) հաստատում էր միապետների իրավունքը ամենուր, որտեղ «լեգիտիմիզմը» վտանգված էր կամ գտնվում էր խախտման սպառնալիքի ներքո, անհապաղ կիրառել ներգործման բոլոր միջոցները՝ ընդույզ զինված միջամտությունը⁹⁶: Հենց լեգիտիմիզմի սկզբունքով ու «միջամտելու տեսության» իրավունքով էր գահընկեց արվել Նեապոլիտանական թագին տիրացած Նապոլեոնի մարշալներից Հովակիմ Սյուրատը և վերականգնվել «օրինական» թագավոր Ֆերդինանդ 4-րդի իրավունքները⁹⁷: Կամ՝ երբ ֆրանսիական էքսպեդիցիոն կորպուսը ճնշեց հեղափոխությունը Իսպանիայում և վերականգնեց Ֆերդինանդ 7-րդի իշխանությունը⁹⁸: Հեղափոխական շարժումները ճնշելու այս նախագիծը պետք է շարունակվեր նաև ամերիկյան մայրցամաքի ապստամբած իսպանական գաղութներում: Նախագծին խիստ ընդդիմացան Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ը՝ հանդես գալով նորանկախ պետությունների ինքնիշխանության իրավունքի պաշտպանությամբ: Մասնավորապես, Միացյալ Նահանգներն արձագանքեցին «Մոնրոյի դոկտրինով»⁹⁹, որը հռչակվեց 1823 թ. դեկտեմբերի 2-ին՝ Իսպանիային և

92 Տես նույն տեղում, էջ 71-72:

93 Տես **Hause Steven and Maltby William**, նշվ. աշխ., էջ 462:

94 Տես **Лавицк Э., Памбю А.**, նշվ. աշխ., էջ 73-85: Այս նախագիծը հաջողված էր մինչև 1848 թ., երբ լիբերալ-ազգային հեղափոխությունների շարքը կրկին ցնցեց Եվրոպան:

95 Տես **Սոլրադյան Մ., Մինասյան Է.**, նշվ. աշխ., էջ 224-233:

96 Տես **Simpson, Gerry**, նշվ. աշխ., էջ 201:

97 Տես **Davis John A.**, Naples and Napoleon Southern Italy and the European Revolutions 1780-1860. New York: Oxford University Press, 2006, էջ 263-266.

98 Տես **Лавицк Э., Памбю А.**, նշվ. աշխ., էջ 74-85:

99 **Monroe James**, President's Annual Message. Washington: December 2, 1823. A Century of Lawmaking

«Սրբազան դաշինքի» երկրներին զգուշացնելու նպատակով¹⁰⁰:

Վիեննայի կոնգրեսից հետո քաղաքական և ընկերային կարգերի բարեփոխումների՝ լուսավորականության գաղափարները բյուրեղացան քաղաքական գաղափարաբանությունների՝ լիբերալիզմի, սոցիալիզմի և նացիոնալիզմի մեջ, որոնք միտված էին Եվրոպայում ազգ-պետությունների կայացմանը¹⁰¹:

Ամփոփում

Համաեվրոպական մակարդակում Նապոլեոնյան իշխանությունը նշանավորվեց հին կարգերից դեպի արդիություն անցումով: Նապոլեոնյան հաստատությունական և կառուցվածքային բարեփոխումները միտված էին ֆրանսիական մոդելով Եվրոպայի կերպավորմանը և ինտեգրմանը: Դրանք նաև մեծապես նպաստեցին Եվրոպայում ազգ-պետությունների կայացմանը: Նապոլեոնյան «Մեծ կայսրությունը», որը միացված, նվաճված կամ դաշնակից երկրների համախումբ էր, ներկայանում էր իբրև միջազգային հարաբերությունների համակարգ: Եվ այս հարաբերությունների նապոլեոնյան համակարգում ճանաչվում էին ազգային ինքնիշխանության, եղբայրական հավասարության ու ազատության գաղափարները: Նապոլեոնյան ժամանակաշրջանը հույժ կարևոր էր նաև ազգերի ինքնորոշման իրավունքի սաղմնավորման տեսանկյունից: Բացի այդ, Ֆրանսիական հեղափոխությունն առաջին համաեվրոպական սոցիալական ցնցումն էր, որն ուներ ոչ կրոնական տրամաբանություն: Ավելին, սա խզում էր քրիստոնեության և պետությունների միջև՝ ստեղծելով ազգային ինքնության և հավատարմության նոր հարացույց:

Ֆրանսիական հեղափոխության աշխարհիկ գաղափարները իրենց արձագանքներն ունեցան նաև Օսմանյան կայսրությունում, հատկապես հայերի, հույների և այլ հպատակ քրիստոնյա ժողովուրդների շրջանում ազգային ինքնիշխանության ձգտումների տեսքով: Ազատություն գաղափարը մարտակոչ էր ինչպես ներքին բռնատիրության դեմ պայքարի, այնպես էլ՝ ազգային ազատագրության: Իսկ հավասարության գաղափարը Օսմանյան հասարակության կորպորատիվ բնույթի պայմաններում կերպավորվեց ազգերի իրավահավասարության, այնուհետև՝ ազգերի ինքնորոշման իրավունքի տեսքով:

Ի հակադրություն Նապոլեոնյան միջազգային համակարգի, ուր ֆրանսիական հեղափոխության գաղափարների համաձայն՝ ընթանում էր ազ-

for a New Nation: U.S. Congressional Documents and Debates, 1774 – 1875, Annals of Congress, Senate, 18th Congress, 1st Session, pp. 12–24.

100 Տե՛ս **Kissinger Henry A.** (1994), նշվ. աշխ., էջ 36: Այն ժամանակ եվրոպական տերությունները դժվար թե մեծ նշանակություն տվին այս զգուշացումներին, քանի որ Միացյալ Նահանգները բոլոր դեպքերում չէին կարող ստիպել նրանց հետևել այդ սկզբունքներին: Եվ, երևի թե, այդ ընթացքում, ինչպես լորդ Կանինգհեմն էր հայտարարում, «Մոնրոյի դոկտրինի» երաշխավորը դարձան բրիտանական թագավորական ռազմածովային ուժերը:

101 Տե՛ս **Hause Steven and Maltby William**, նշվ. աշխ., էջ 465: Եթե լիբերալիզմն ու սոցիալիզմը նշանավորում էին մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները և սոցիալ-տնտեսական արդարության գաղափարը, ապա նացիոնալիզմը՝ ազգի հավաքական իրավունքները և առանձնահատկությունները:

գերի համախմբման և ազգային սահմանների ընդգծման գործընթաց, Վիեննայում ընդունվեցին սկզբունքորեն հակառակ որոշումներ՝ Եվրոպան վերաբաժանելով այնպես, որ կարծես թե ազգեր գոյություն չունեն: Ըստ այդմ, Եվրոպայի վերակառուցման համար հիմք դարձան հավասարակշռության (*équilibre*), լեգիտիմության (*légitimité*) և փոխհատուցման (*compensation*) սկզբունքները: Իսկ Եվրոպայի միասնականացման Նապոլեոնյան նախագծին փոխարինեց մեծ տերությունների «Եվրոպական համերաշխության» հղացքը:

Տիգրան Ռ. Եփրեմյան–գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է միջազգային համակարգերի պատմությունը, Հուգո Գրոթիուսի քաղաքական իմաստասիրությունը, Վեստֆալյան աշխարհակարգը, Եվրասիական աշխարհաքաղաքականությունը, հայկական Սփյուռքը, միջազգային հարաբերությունների կոնստրուկտիվիստական տեսությունները («անգլիական դպրոց», նեոգրամշխականություն, քաղաքակրթությունների բախում):

Summary

NAPOLEON BONAPARTE AND THE RIGHT OF NATIONS TO SELF-DETERMINATION

Against european solidarity of the great powers

Tigran R. Yepremyan

Key words: Napoleon Bonaparte, European System, nation, self-determination, sovereignty, liberty, equality, Armenians, the Congress of Vienna, legitimacy, equilibrium.

The article comparatively examines the new paradigm in international relations based on the French revolutionary ideas and sifted by Napoleon Bonaparte. The armies of the Revolutionary France were transforming Europe in accordance with the republican values and the universal principles of *Liberté, Égalité and Fraternité*. In this context the goal of Napoleon's policy of exporting the French Revolution was the creation of commonwealth of European sovereign nations, which was to supersede *ancien régime* and sovereign monarchs, based on the European equilibrium. His policy marked an important step towards the formation of the right of self-determination of nations. The Napoleonic structural and institutional reforms promoted the rise of the national ideologies and the modernization of European societies and states into modern nation-states. Thus, the Napoleonic period marked the transition from the *ancien régime* to the modern era.

The French Revolution was the first great pan-European social upheaval, which had a secular logic, thus affecting also the neighbouring Islamic world.

Moreover, its ideas caused a great schism between Christianity and states affecting the very basis of group cohesion and creating new patterns of loyalty and new paradigms of identity formation. Thus, the ideas of French Revolution found their reflections also among the Christian subjects of the Ottoman Empire. Particularly, the Greek and the Armenian elite of Constantinople, who were familiar with the Western culture, were linguistically and intellectually prepared to accept the revolutionary ideas. The idea of liberty in the Ottoman context acquired a new political content becoming the war-cry of the national liberation struggles of the oppressed people against the Ottoman despotism. The idea of equality due to the corporative structure of the Ottoman society found itself in a different context having little effect when appealing to the individuals, but getting profound response while appealing to the ethnic or religious groups. Thus, the idea of equality was raised from individualistic level to the interethnic level and found its expression as equality between nations, which was later raised to the right of self-determination of nations.

The Napoleonic “Grand Empire,” which was stretching from Holland to Poland and from Spain to Balkans, represented a conglomeration of three groups of territories: annexed lands, conquered countries, and allied countries. Conditionally we call this as the Napoleonic System of International Relations, where the ideas of national sovereignty, liberty and fraternal equality were recognized at least in the ideological sense. Remarkably, Napoleon’s European policy had a profound influence on both ideological and structural unification of Europe. The creation of administrative and legal uniformity, economic unity, and the territorial reorganization in various parts of Europe helped to stimulate national aspirations.

In contrast to the Napoleonic system the victorious conservative powers gathered in Vienna for the refoundation of Europe made their decisions based on the principles of *équilibre*, *légitimité* and compensation trying to stop the general transformation. Thus, Napoleon’s concept of the integration of European nations was replaced with the great powers’ Concert of Europe. However, Napoleon’s victories and the French hegemony over Europe proved the supremacy of the French nation-state and sent a clear signal to the European rulers that modernization of state apparatus based on the French model was indispensable if they wanted to survive and to continue playing a decisive role in the international arena.

НАПОЛЕОН БОНАПАРТ И ПРАВО НАЦИЙ НА САМООПРЕДЕЛЕНИЕ

Против европейской солидарности великих держав

Тигран Р. Епремян

Ключевые слова: Наполеон Бонапарт, Европейская система, нация, самоопределение, суверенитет, свобода, равенство, армяне, Венский конгресс, легитимность, равновесие.

Статья сравнительно рассматривает новую парадигму международных отношений, конструированных на основе идей Французской революции и просеянных Наполеоном Бонапартом. Армии революционной Франции преобразовали Европу в соответствии с республиканскими ценностями и универсальными принципами свободы, равенства и братства. В этом контексте целью Наполеоновской политики экспорта французской революции было создание содружества европейских суверенных наций, которая должна была вытеснить старый режим с суверенными монархиями и их европейское равновесие. Его политика стала важным шагом на пути формирования права наций на самоопределение. Наполеоновские реформы способствовали модернизации европейских обществ и становлению современных национальных государств.

Французская революция была первым большим общеевропейским светским социальным потрясением, которое повлияло также на исламский мир. Более того, его секулярные идеи повлияли на саму основу групповой сплоченности, создав новые модели лояльности и парадигмы формирования национальной идентичности. Идеи Французской революции нашли свое отражение также среди христианских подданных Османской империи, в частности – греческой и армянской элиты Константинополя. Идея свободы в Османском контексте приобрела новое политическое содержание, становясь боевым кличем для национально-освободительной борьбы османских подданных. Идея равенства в связи с корпоративной структурой османского общества оказалась в другом контексте. Имея небольшой эффект при обращении к личностям, она получила глубокий отклик при обращении к этническим или религиозным группам. Идея равенства была поднята с индивидуалистического уровня на межэтнический уровень в качестве равенства между нациями, которая позднее была возвышена до права наций на самоопределение.

Наполеоновская “Великая Империя” от Голландии до Польши и от Испании до Балкан, представляла собой конгломерат из трех групп территорий: присоединенные страны, завоеванные страны и союзнические страны. Условно мы рассматриваем это как Наполеоновская система международных отношений, где идеи национального суверенитета, свободы

и братского равенства были признаны, по крайней мере, в идеологическом смысле. Европейская политика Наполеона оказала глубокое влияние, как на идеологическую, так и на структурную унификацию Европы. Наполеоновские реформы и территориальные реорганизации в различных частях Европы способствовали стимулированию национальных стремлений.

В отличие от наполеоновской системы, консервативные державы победительницы собравшиеся в Вене приняли свои решения на основе принципов равновесия, легитимности и компенсации, пытаясь остановить процесс преобразований. Таким образом, наполеоновская концепция интеграции европейских наций была заменена европейским концертом великих держав. Тем не менее, победы Наполеона и французская гегемония над Европой доказали превосходство французского национального государства и послали четкий сигнал европейским правителям, что модернизация государственного аппарата на основе французской модели необходима, если они хотят выжить и продолжать играть решающую роль на международной арене.